



J.Q.  
Гарри  
Джордж  
Хьюитт  
Уильям  
Генри

1913



1913



9047.925  
478

254

ՀԱՅԿԱՍՏԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՃԳ

31 AUG 2001

6 p.

ԿՈՐԻՒՆ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ

ՄՐԲՈՅՆ ՄԵՄՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԵՐՈՅ ԹԱՐՔՄԱՆՉԻ

○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7.  
1913

9631.

ՅԻՇԱՏԱԿ

ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒՑԻ 1500 ԱՄԵԱՅ

ԵՒ

ՀՅԵԿԱԿԱՆ ՏՊԱԴՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ

ՅՈԲԵԼԵԱՆԻ

412—1912

1512—1912

Ի ՅԱԻԽՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱԻԵՏԻ ԳԱՅ ԲԱԼԱՅԵԱՆ

ԴՈՒԿԱՍԵԱՆՑ

Ծուշեցոյ

ના.સા.બા.૧૪

અનુભૂતિ વિશેષજ્ઞ મણિ


૫

અનુભૂતિ વિશેષજ્ઞ મણિ


અનુભૂતિ વિશેષજ્ઞ

૧૧૦૧ - ૧૧૨


૧૧૦૧ - ૧૧૩



અનુભૂતિ



Ս. ՄԵՍՐՈՊ



Ս. ԱԶՅՈՒԿ

Սուբբ Մեսրոպի մեծ գիւտով սկիզբն է  
առնում հայ գրականութիւնը, նորա հարազատ  
աշակերտ Կորիւն վարդապետը իւր համառօտ  
պատմութեան մէջ նկարագրում է այդ գէպը  
և մեծ վարդապետի կեանքն ու գործունէու-  
թիւնը:

Այդ համառօտ գրուածքը իրապէս մի գո-  
վասանական ճառ է սիրող աշակերտից իւր ու-  
սուցչին և հայութեան մեծագոյն բարերարին  
նուիրուած:

Դուկասեան թանգարանի վարչութիւնը ի  
նորոյ լոյս է ածում այդ գրքոյիր նուիրելով  
հայ գրերի գիւտի 1500 ամեայ տարեգարձին.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՅ ԵԽ ՄԱՀՈՒԱՆ

ԱՌԵ ԵՐԱՆԵՒՅՈՅ ՄՐՅՈՅ ՄԵՍՐՈՎ ՊԱՅ ՎԱՐԴԱՑԻԾԻ

ՄԵՐՈՅ ԹԱՐԴՄՈՒՁԻ

Ի Կ Ա Ր Ի Խ Ն Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Է Լ

ՅԱՇԱԿԵՐՏԵ ՆՈՐԻՆ

**Պ**ԱՅՐԱՆԱԶՅԱՆ աղգին և Հայաստան աշխարհին զատուածապարգև գրոյն, եթէ Երբ և յորժւմ ժամանակի մատակարարեցաւ, և որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեցաւ. և վասն նորին լուսաւոր վարդապետութեան, և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան, զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատնանշան <sup>1</sup> ծաղկեցուցանել. և մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացու <sup>2</sup> վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգացայ, եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի՝ Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ. և ընդ նմին այլոց ևս քաջալերութիւն աշակեր-

կորիւն վարդապետի «Պատմութիւն ս. Մեռ-  
րովայ» ներկայ տպագրութիւնն արտատպուած  
է վենետիկի Մխիթարեանների 1894 թուին հրա-  
տարակած՝ երկու զանազան բնագիրներ (vari-  
ante) պարունակող օրինակից:

տակցաց մերոյն վարդապետութեան։ Ուստի և  
իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ,  
թէպէտ և էի կըսերագոյն և առաւել քան զկար  
մեր, զրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փու-  
թանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն  
մատենագրել։ Զորս և մեր համօրէն աղաշեալ  
երկախառնել ընդ մեզ աղօթիւք՝ յանձնարարու-  
թեամբ աստուածեղէն <sup>3</sup> շնորհացն, զի կամա-  
կարագոյնս և ուղղագոյնս նաւիցեմք զհամա-  
տարած ալեօքն վարդապետական ծովուն։

Եւ արդ առեալ նախաբանեցուք, եթէ իցէ  
համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն  
կատարելոց. ոչ ի մէնջ արուեստախօսեալ մերոյն  
կարծեօք վիճաբանելով, այլ յօրինակացն տուելոց  
զընդդիմակացն բարձրացուցանել։ Քանզի Աս-  
տուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւ-  
րոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան  
վարուց՝ զչքնաղ և զբարձրագոյն հատուցումն  
բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ  
և աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր ժամա-  
նակօքս մատենապատում երկնարերձ պայծառա-  
ցուցեալ, զհոգեղինացն և զմարմնականացն առ  
հասարակ փայլիցեն։

Եւ ի մովսիսական պատմութեան յայտնի է  
երանելեաց արանցն ազնուականութիւն, ճշմար-  
տութեան հաւատոցն հաստատութիւն, աստուա-  
ծամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն,

սքանչելական կենացն պայծառութիւն։ Զի ոմն  
ընդունելի պատարագաւ՝ արդար կոչեցեալ. Եւ այլ  
ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ ամենակուլ  
մահուանն կենօք երկեալ, և միւս ոմն բովան-  
դակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռ-  
նացելոյ աստուածապատիժ ծովուն, հանդերձ  
ամենայն շնչականօք տարեսոր ժամանակօք նա-  
ւակաց պահեալ. և միւսոյն յանկարծագիւտ հա-  
ւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուա-  
ծախօս դաշնաւոր կատարեալ, և զաւետիս հան-  
դերձելոց բարեացն ժառանգեալ։ Բազմօք և այլ  
նոյնպիսիք աստուածածանօթ գտեալք. որոց ազ-  
նուականութիւնքն յամենայն աստուածածանօթ  
գրոց պատմի։ Հանգոյն ասացեալոյս երսնելոյն <sup>4</sup>  
Պաւոսի առ երբայեցիսն կարգեալ զանուանն  
գովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն. որով  
զվարձահատոյց մխիթարութիւն ընկալան յա-  
մենապարգևողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր  
յառաջադիմութեանցն. նա և զժանդադործին Բա-  
հաբու զհիւրընկալութիւն լրաեսացն՝ համեմատէ։  
Իսկ իբրև հայեցեալ ի բազմախուռն գումա-  
րութիւն, արդարև զսակաւուցն զանուանս յայտ  
առնէ. և զայլովք ևս զանց առնէ, անբաւական  
զժամանակն առ ի կարգի պատմելոյ։ Ի կիր ար-  
կանէ այնուհետև նշանակել միանգամայն զփոր-  
ձութիւնս ի վերայ յարձակեալս. ևնոցա զանընդ-  
գիմակաց զնահատակութիւնսն, զորս և պատուա-

կանս քան զաշխարհս առ վաճառ համարի: Սոյն օրինակ և ամենայն գիրք հոգեպատումք՝ նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն դօրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրօնիցն զբարեյադութիւն, և զոմանց՝ ըստ աշխարհագիր՝<sup>5</sup> կարդաց զմարտից և զպատերազմաց արութիւնսն. որպէս զնեբրոսայն և զՄամփսոնին և զԴաւթայն: Եւ զոմանց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ. որպէս զՅովսեփայն յԵգիպտոս, և զԴանիէլին ի Բաբիլոն: Յորոց և հզօր թագաւորացն խրատիչք էին, զաշխարհակալ կենցաղոյս զհանգամանսն ցուցանէին, հանդերձ ամէնիշխանին Աստուծոյ ծանօթս առնելով: Զորոց և մարդարէին իսկ գովեալ զիմաստութիւնն, ասէր ցոմն այսպէս. «Մի թէ իմաստնագոյն իցես քան զԴանիէլ. կամ իմաստունք խրատուք խրատեցին զքեզ հանճարով իւրեանց»: Եւ ոչ այսչափ միայն. այլ և հոգեկան ազգին հրեշտակութեամք՝ գովեալ զսրբոյն գորութիւն, որ զԴանիէլ ցանկալի քարոզելովն կոչէին. և զուուրբ Տիրամայրն ի Գալիլեայ՝ օրհնեալ ի կանայս:

Բայց զի՞նչ ասիցեմք զզուզանացն զտուի միմեանց պատուեալ զգովութիւնս. զորոց և Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչէր զազնուականութիւնս. ոչ միայն զյանդիմանական գործոյն, այլ և զծածուկ սրտիցն լուսաւորու-

թիւնս՝, առաջի հրեշտակաց և մարդկան բերէ: Որպէս զհիւրամեծարին Սրբահամու, հրեշտակօքն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ. պատմելով նմա յԵտ աւետեցն ընկալելոց, զի՞նչ ի Սոդոմն էր գործելոց: Նոյնպէս և զքաջի նահատակին Յորայ յառաջ քան զպատերազմել առաջի պատերազմականին՝ յօրինէ զգովութիւն ասելով. «Այլ ճշմարիտ արդար և աստուածապաշտ, և որոշեալ յամենայն գործոց չարաց»: Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական զըով հնչեցուցեալ. զորոյ և զտղայութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն օրինացն. նա և զայլազգոյն զՅոթորի ևս զիրատն՝ չանցուցեալ անդիր:

Եւ այնպէս միհամմուռ ամենայն աստուածակրօն արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն՝ յաստուածագիր օրինացն, զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն: Եւ ոչ միայն զյառաջագունիցն, այլ և զկնի եղելոցն՝ զՄիածնի որդւոյն Աստուծոյ Փրկչին ամենեցուն, ի լուսաբեր աւետարանին խւրում ծաղկեցուցանէր զազնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ իսկ պատկէր. ոչ միայն սեպհականացն զերկոտասանիցն, և կամ զյառաջամուռ զկարապետին, այլ և զայլոց մատուցելոցն՝ գովէ և զհաւատոցն ճշմարտութիւն: Քան-

զի զնաթանայէլ առանց նենգութեան նշանակէ. և զթագաւորագին զմեծութիւն հաւատոյն՝ անզիւտ յիսրայէլի ասէ: Բայց ոչ միայն զմեծաւմեծն, այլ առաւել ևս զթեթեագոյնն բարձրագոյն՝ անարդամեծարն Քրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ իւզոյն յարգէ. և զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ իներքոյ երկնից: Եւ զկնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոցն ասէ. նաև զգանկաց երկուց ընծայելոցն գովէ զարկանելեացն՝ զյօժարութիւն առաւել քան զմեծացն: Իսկ Պաւղոս ի մտի եղեալ էր զրջեցուցանել զբրիստոսադիր կարգացն պայծառութիւնն, անօթ ընտրութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ:

Վասն որոյ երանելոյն հայեցեալ ի շնորհացն բարձրութիւն առ իւրոյ մեծ օրինացն, և առ ամենայն սրբոցն, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն՝ գառնայ. Եթէ «Շնորհք Աստուծոյ, որ յամենայնի հոչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս. և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեւք յամենայն աեղիս»: Ի վերայ այնորիկ ապա և զհամարձակագոյնն բերէ, թէ ո՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ: Եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն, զամենայն գործակցաց իւրեանց զրով նշանակել զբաջութիւնս. տեսանել զոմանց ի սուրբ աւետարանին և զոմանց ի գործս առաքելոցն՝ երանելոյն Ղուկասու մաւ-

տենագըեալ. և իցեն որ ի կաթուղիկէս առաքելոցն առաւելագոյնս ճանաչին:

Այլ Սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբք թղթովք պատմէ զիւր առաքելակիցս, և նիզակակիցս<sup>10</sup> և ուրախակիցս իւր առնէ. և ի վախճանի թղթոցն, ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն կատարեալ՝ յանուանէ հարցանէ. և զուրումն յաւետարանէ անտի նշանակէ զգովութիւնն: Բայց ոչ միայն զերանելոյն զօգնականութիւնն յարգէ, այլ և զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազումզովութիւնս փոխանակ մեծարանացն կարդէ, փասն որոյ և յաղաշանս առ Աստուած մատուցեալ՝ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ: Եւ ամենայն եկեղեցեօք հնչեցուցանէ զընտրելոցն զագնուականութիւն. ոչ միայն զարանցն՝ այլև զգկանանցն աշակերտելոց<sup>11</sup>, որ զծմարտութիւնն աւետարաննեն:

Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի սրբածանս գովութեան, այլ զի օրինակ և կանոն գինի եկելոցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւորս լինել ամենեցուն՝ ստիպէ ասելովս, թէ «Զհետ երթայք սիրոյ. և նախանձաւոր լինել ամենեցուն հոգեորացն»<sup>12</sup>: Որոց զյօժարութիւն Աբայեցւոց վասն պաշտաման սըրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ յորդորեաց: Այլև համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւն. թէ՝

«Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս»:  
Այլ և նմանող իւր և Տեառն ստիպէ լինել:

Դարձեալ փութայ ամենեքումքը հանդերձ  
ըստ Քրիստոսի հետոցն վարել, «Հայեցարնեք,  
ասէ, ի զօրագույն հաւատոց, և ի կատարիչն  
Քրիստոս»: Եւ դարձեալ, թէ՝ «Յիշեցէք զառաջ-  
նորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ.  
Հայեցեալ յելս զնացից նոցա, նմանողք եղերուք  
հաւատոցն», Եւ միանգամայն, եթէ՝ «Զայս խոր-  
հեցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ և ի Քրիստոս  
Յիսուս»: Հանդոյն սմին և Ղուկաս յսկիզբն առա-  
քելագործ մատենին դնէ: Իսկ ցանկալի Տեառն  
եղբայրն Յակոբոս, զհամօրէն իսկ զգունդն սրբոց  
հանդերձ սրբասէր տերամբն յօրինակ առեալ՝ ի  
թղթին իւրում ասէ, եթէ, «Օրինակ առէք չար-  
չարանաց և յերկայնմտութեան զմարգարէն, որ  
խօսեցան յանուն Տեառն. զհամբերութիւն Յորայ  
լուարուք, և զկատարումն Տեառն տեսէք»:

Յայտնի է այսուհետեւ ասացելովքս, եթէ զո-  
վութիւն ամենայն աստուածասէր ընարելոցն ի  
Տեառնէ է. որ ի հրեշտակաց, որ առ ի միմեանց,  
ոչ ի պարծանս անձանց՝ այլ առ ի նախանձուկս  
միմեանց արկանելոյ զմիմեամքը, քաջալերեալք  
հասանիցեմք ի բարեացն կատարումն՝ ի նշանա-  
կեալ նպատակն երանելոյն Պաւղոսի, եթէ՝ «Միա-  
բան հասանել ի չափ հասակին Քրիստոսի»: Որոյ  
ազատութիւնն յերկինս է, ակն ունել Փրկչին մե-

ծին Աստուծոյ: Ունիմք և զկանոնական յաջորդեալ  
յառաքելոցն անտի զշնորհապատում գրեալսն,  
եթէ նրապէս մեծարեալք ի միմեանց, գովեալք  
ըստ ճշմարիտ հաւատոյն և ըստ աւետարանա-  
գործ կրօնից, մինչև ցայտօր ժամանակի նովին  
սովորութեամք վարին:

Եւ արդ առեալ յերկոցունց համարձակութիւն  
ի կիր արկանել և զվարս առն արդարոյ, արդ  
այսուհետեւ և խոստացեալն առաջի դիցի. և հայ-  
րենակատար մեծարեալ պայմանաւ՝ որ առ ի  
մէնջ հաճեցի, և նոցա քաղցրատուր հրաման  
հատուցեալ զարդարեսցի:

Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք,  
վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր  
Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հա-  
ցեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կո-  
չեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելե-  
նական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն  
Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կա-  
ցեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր ար-  
քայատուր հրամանին առ հազարապետութեամբն՝  
աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկա-  
ցեալ ի մուտե եղեալ աշխարհական <sup>13</sup> կարգաց, ցան-  
կալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց  
զօրականացն, և անդէն ուշ եղեալ փութով ըն-  
թերցուածոց աստուածեղին գրոց. որով առ ժա-  
մայն լուսաւորեալ և թեամուխ միջամուխ յաս-

տուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն:

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն, և առեալ զիսաչն պարծանաց, ելանէր զինի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, և անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարդ մտանէր. բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեորացն գանձն տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ զիշերոյն և զհարկ քնոյ՝ յոտնաւոր տքնութեան՝ ի թօթափել ական վճարէր: Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, և գտեալ ևս զոմանս՝ յինքն յարեցուցանէր աշեկերտեալ նմին սովորական աւետարանութեան. և այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական քաջութեամբ տարեալ և պայծառացեալ, ծանօթական և հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկան:

Առեալ այնուհետեւ երանելոյն զհաւատացեալ:

իւր, զիմեալ իջանէր յանկարգ և յանդարձան տեղիս Գողթան: Յյլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածաէր, ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառութիւն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական զիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորթամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ ընակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երկէին, կերպակերպ նմանութեամբ դիւցն փախստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց: Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր՝ զհամաշխարհականս սփոփելով. և առաւել յաղօթս մշտնջենամունչս, և բազկատարած պաղատանս առ Աստուծած, և արտասուս անդադարս. զմտաւ ածելով զառաքելականն, և ասէր հոգալով. «Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց»:

Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք ելս իրացն գտանիցէ: Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին զեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն

Ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ, Եւ միանդամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և զայն առնէին աւուրս բազումս: Ապա ելանէր նոցա պարգեական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանշագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վուամշապուհ:

Յանժամ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն զրելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զո՞մն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հարէլ կոչէին. որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի:

Իսկ Հարէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմա-

նէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց. ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սըրբով Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հարէլէն, ուրախ լինէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն, խընդրէին հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթեսցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային. ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան. իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր. և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր. և նովին նշանագրովք տանէր:

Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան:

Յետ այնորիկ դարձեալ կրկին անդամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկաոյ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սըրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սըրբութեանն՝ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վուամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս

Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջնն եղեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն։ Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն. որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի։

Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ գտարեալմն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զազօթս և զտքնութիւնն և զմաղատանս արտասուալից, զիստամբերութիւնն, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեսց, յայնֆամ կեցցես»։

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ։ Որում պարզեէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջոմս իւրով, նշանագիրս հայերէն լեզուին։ Եւ անդ վազվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիզոբայիւք և կապօք։ Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւ-

րովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր։ Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելենական դպրութեան Հոռովանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն զկարձն և գերկայնն, գառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոյ առաջնոյն Յովիան անուն կոչէին, յեկեղեց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն։ Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ՝ «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Որ և զրեցաւ ձեռամբն այնուրիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան։

Սպա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին. և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց։ Որ յորոց նախընկալն եղի, առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ զովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, և ի միիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք։ Յորոց թուղթս աւե-

տագիրս հանդերձ շնորհատուր պարզեօքն, և ամենայն իւրայիւրքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր. զօթեանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր քաղաքին, ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց մեծաց:

Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարձանայր յէջս Սինէական լերինն. չասեմք թէ առաւելօքն՝ պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրաման ի բաղուկս այցն աստուածատես, ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տէրունիսն, և կործան յերկիր, տիրագրուժք յիւրեանց կուռս ձուլածուին երկիրապատնէին, և զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին. <sup>15</sup> Քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախծութիւնն: Իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեոր միսիթարութեամբ՝ կարծեալ զընդունելոցն յօժարութիւնն, և ընդունելոցն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւնն ճանապարհացն աւետաբեր:

Բայց մի՛ ոք յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի. թէ զիարդ զայր մի խոնար-

հագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերեւս ստգտանիցեմք: Եւ կարեմք այլ աւելի հաւատովք. քանզի և չկայ ինչ ի վերայ յայտնեօք և ծածկանօք <sup>16</sup> զաստուածականն խոտել: Քանզի միոյն Աստուծոյ ամենազօրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին:

Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն՝ զափամբ Ուահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ. ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգեւորօք, և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զիսուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն զիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք <sup>17</sup> էին: Առ ի յարդարել և զնոցահարուստ <sup>18</sup> ամացն ծնունդս՝ առեալ պարզախօսս հոետորաբանս, կրթեալս աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին: Եւ այնպէս

միջամուխ եղեալ համգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել<sup>19</sup>: Եւ ի ձեռն առեալ այսուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել ի գոել և յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առերանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց, յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիսեանցն որ գոլոցն էին. նոյնպիսիք և այլոց մարդարէիցն հրամայեալք: «Առ, ասէ, քարտէզ նոր մեծ, և գրեա ի նմա զրչաւ գպրի»: Եւ այլուր, թէ՝ «Գրեա զտեսիլդ ի տախատակի, և ի գիրս հաստատեա»: Իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամենայն ազգաց զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովն, թէ՝ «Գրեսցի յազգ յայլ»: Եւ թէ՝ «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդոց»: Զոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանաւն, եթէ՝ «Ելքը ընդ ամենայն ազգա»: և եթէ՝ «Քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզերս»: Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ յուսալից փութով, և երկելի և արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիւրեանց մշակութիւնն ցուցանեն:

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշ-

խարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարդարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանգերծ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառը հայերէնախօսք գտան: Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն և ակնավայել աեսիլ հայելոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվադակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջազոյն յաւիտենիցն, և առա եկելոցն սկզբանն և կատալածի, և ամենայն աստուածատուր աւանդութեանցն: Իսկ իրեն զշափ առեալ զիրացն հաստատութեան, և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և թեքել, և պատրաստական քարոզութեանն անդէտ մարդկան յօրինել. որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գուառաց Հայաստան աշխարհին յորդեալք և զըրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բըդլիեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ:

Անդ էր յիշելի և մարգարէականն, եթէ՝ «Եղիցի» անդ աղբիւր բղիսեալ ի տան Դաւթի», Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, գաս գաս <sup>20</sup> զաշակերտեալմն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայսն զեկուցանելոյ. որոց կանոն և օրինակ զիւրեանց անձանց արգափս եղեալ, և պատուիրեալ կալ ի նմին կանոնի. և իւրեանց անդէն զ'առընթերակաց արբունիսն, հանդերձ ամենայն աղատագումդ բանակիւն՝ աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ: Առաւել երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որեարն՝ ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ. որոց առաջնոյն Վարդան անուն էր, որ և Վարդկան կոչէր: Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան:

Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց. որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կայենականսն, և նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն: Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ այլովք ևս օգնականօքն. որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն, և երկրորդին Մուշէ <sup>21</sup> անուն ի նահանգէ Տառնոյ, որք էին սուրբք և զուարթագոյնք. հան-

գերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել. որով յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ, եթեալ իջանէր առ ոտս տանն Գողթան՝ յառաջին գաստակերտն իւր: Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ, լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի. և կարգէր յամենայն գիւղս գաւառին՝ գասս սրբոց վանականաց: Որում և հասեալ ժամանեալ հայրաբարութին Գտայ, որդւոյ Շաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իրեկ հաւասարի որդւոյ վարդապետին տանէր:

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր. և անդ սստուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն, բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւաղաբարոյ կողմանցն. և այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել, մինչև ի նոցունց իսկ ի վայրենեացն՝ եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կու-

չեր Սնանիաս, այր սուրբ և երկելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ. ապա և զերկին Սիւնեաց՝ դասուք վանականաց լոյցը:

Յորում ժամանակի պարզեալ յԱստուծոյ, հասանէր ի գրուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիսականն Վասակ. այր խորհրդական և հանձարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր:

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մաի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն. և առնոյր կարգեալ նշանագիրս Վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմանի Տեառնէ: Գրէր կարգէր և օրինօք յարդարէր, և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ դնայր իջանել ի կողմանս Վրաց. և երթեալ յանդիման լինէր թագաւորին՝ որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէու: Եւ առաւելագոյն հնագանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն:

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ

ամենեցուն զինդրելին կատարել: Եւ դաեալ զայր մի թարգման Վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Զաղայ, այր գրտգէտ և ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց, և ի խառնադանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկունս՝ տալ ի ձեռն վարդապետին: Զոր առեալ՝ արկանէր ի բովս վարդապետութեանն. և հոգիոր սիրոյն եռանդմամբ՝ զազտ և զժանդ շարաւահոտ զիւացն և զնոտիագործ պաշտամանն ի բաց այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց՝ և անյիշատակ ցուցանել, մինչև ասել՝ թէ՝ «Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»:

Եւ արդ զնոտա, որ յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով առտուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն՝ Եպիսկոպոս կացեալ անման արքունականի: Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն չայոց. և պատահեալ Սահակայ կաթուղիկոսի չայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանգամայն փառաւոր աւնելով զԱստուած զմեծանունն Քրիստոս:

Ապա դարձեալ ելանէր շրջէր զտեղեօք կարգելեօք, և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց, զուարթացուցանել, նորոգել, հաստատել, Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս՝ լի առնէր զուրբը աւետարան Տետոն, և ամենեցուն զգուշացուցեալ <sup>22</sup> զկենաց ճանապարհն վարելոյ, Խորհուրդ առնոյր <sup>23</sup> այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք, անցանել ի կողմանս Յունաց. և վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն զնմանէ անդէի հիւսիսական կողմանց հոչակելոց, առաւել միամառութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին, և յիշխանաց և ի գաւառականացն պատուեալ. մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատոլիս <sup>24</sup> ի մուտ ճանապարհին, որ զիրս առաջի եղեալ գրով՝ ցուցանէր կայսերն, որում Թէոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր, վայելուչ մեծարանօք զԱռուբն՝ Ակումիտ անուն կոչելոյ:

Իսկ նորա զբազմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիտինացւոցն, յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. և գլխաւոր աշակերտացն՝ թողոյր զայն, որում Դիոնդէոսն կոչէին. այր հաւատարիմ և Ճշմարտապաշտ: Եւ առեալ երանելոյն զպատուա-

կան եպիսկոպոսն Դերջանոյ որոյ անուն կոչէր Գինթ, և սակաւս յաշակերտաց անտի, և եեալ յանարշոյն դիմոսական և բազում պատիւ գտեալ, հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն. և մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ գրան, որում Ատարիկոս կոչէին. յորոց և գտեալ շնորհն՝ հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելովք, յեկեղեցւոյն և յարքունեաց և ի պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ Պատեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, և առեալ զանընդգիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկառյն յաշակերտիւնն, առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժանտագործ ազգին բարբարոսաց, և եկեղեցեաց հաստատութեան, և մեծամեծ պարգիօք պատուել: Վասն որոյ հաւանեցուցեալ Ճշմարտին զարքունիսն, անընկալ թողոյր. և երկիրպագեալ ծիրանափառ օգոստականացն, և սրբոյ կաթուղիկոսին, և ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն և յերեկի իշխանացն քաղաքին, և ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս ի կառարքունատուրս: Եւ մեծաւ շքով և բազում վայել-

չութեամբ՝ ունէին զճանապարհս արքունուկանս, և ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երկէին. և մեծամեծ պարգեւս գոտեալ, գային հասանէին ի ժամադիր կողմանս. և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց, հանգերձ սակերօք կայսեր յանդիման լիւնէին. Եւնորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել. և հըեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկաւոյ ժողովել, և նոցին ոոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս. յոր և երանելին զլարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր:

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զդժպատեն և զկամակոր Բարբարիանոս աղանդն քննելոյ. և իրեւ ոչինչ գտանէր հնարս յուղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն՝ պատուհասիք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս: Իսկ յորժամայնու ևս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս ապա խանձեալս, մըեալս և զունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորգէին:

Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ՝ սակեալ՝ վճարեալ, և բազում շնորհագիր մատեանս գհարցն եկեղեցւոյ սասցեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն

զխորութիւն, և լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

Յայնմ ժամանակի եկեալ՝ դիպէր նմա այրմի երէց Աղուան ազգով, Բենիամէն անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս Աղուանէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերնապարգե կորովի սովորութեան իւրում. և յաջողութեամբ Քրիստոսի շնորհացն կարգեալ և հաստատեալ կշռէր: Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց աշխարհին և յամենայն եկեղեցեաց. առ որս թողեալ վերակացուահաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրաց աշակերտացն. որ առաջնոյն Ենովք անուն էր, և երկրորդին Դանան՝ արք կրօնաւորք և յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն. զորս յանձնարեալ շնորհացն Աստուծոյ՝ անդէն զետեղէր: Եւ ինքն բազում աշակերտօք գայր անցանէր իւկողմանս Հայոց մեծաց. և հասեալ ի նոր քաղաքն յանդիման լինէր սրբոյ Եպիսկոպոսին Սահակայ, և թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին և ամենայն բանակին. և պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Աստուծոյ, զադարէր անդաւուրուինչ՝ միսիթարէր վասն հոգեոր անձուկն սփուելոյ:

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից, և երթեալ ի ջանէր յաշխարհն. և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր

զուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն  
Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում  
Արքաղ<sup>28</sup> էր անուն, ամենայն ազատօք հանդերձ.  
որոյ առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն  
անուանն Քրիստոսի. Ապա հարցեալ ի նոցանէ,  
առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր, և նոցա  
Երկոցունց զուգացելոց եպիսկոպոսին և թագա-  
ւորին՝ յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ.  
տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց  
իշխանութեանն իւրեանց, բազմութիւն մանկանց՝  
յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ  
արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դըպ-  
րոցաց, և ռոճիկս կարգել ի գարմանս:

Իսկ իբրև հրամանն այն, արգեամբք և զոր-  
ծովք յանկ ելանէր, ապա այնուհետև երանելոյն  
Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվա-  
ղակի գաստուածային գրոց թարգմանութիւնս ի  
գործ արկանէր, որով անդէն յական թօթափել,  
վայրենամիտ և գատարկասուն և անասնաբարոյ  
աշխարհն Աղուանից, մարգարէագէտք և առաքե-  
լածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և  
ամենայն աւանդելոցն Աստուծոյ, ոչ իւիք ան-  
տեղեակք: Դարձեալ առաւել ևս երկիւղածն յԱս-  
տուծոյ արքայ Աղուանից՝ միամիտ փութով հրա-  
ման տայըր, սատանայակիր և դիւամոլ ազգին,  
սաստիւ. թափել զերծանել յունայնավար հնացե-  
լոցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիս-

տոսի:

Եւ յորժամ զայն արարեալ հաւասարու-  
թեամբ, և լցեալ զպիփառյն իւրեանց, և զկամացն  
յօժարութիւն, ձեռնատու<sup>29</sup> ևս եղեալ նմա սրբա-  
մատոյց վարդապետութեանն ի Բաղասական կող-  
մանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին,  
հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկո-  
պոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից: Եւ  
զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւ-  
րեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանա-  
յիւ արքունական դրանն, որում անունն Յովսա-  
թան կոչէին, որոյ բազում յօժարութիւն ի վար-  
դապետութենէն էր գտեալ, և յանձն առնելով  
զնոսա և զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ,  
խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, ան-  
ցանել յաշխարհն Վրաց. և հանդէալ հասեալ գայր  
Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա  
իշխանն Գարդմանից, որում Խուրս կոչէին, և  
ասպնջական եղեալ նմա աստուածաէր երկիւ-  
ղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապե-  
տին, հանդերձ իշխանութեամբն իւրով. առա-  
ւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ և ի պարարտու-  
թիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին  
ուր և երթալոցն էր:

Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանսն, առ  
որով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ  
Վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղ-

կեցուցանէր զվարդապետութիւնն. և նորա շրջեալ գամենայն աշակերտօք, պատուիրեալ կալի ճըշ-մարտութեանն. Յախնժամ իշխանին Տաշրացւոց առն պատուականի և աստուածափրի; որ անուա-նեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենովիւո վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ քան զայլոցն դաւառաց անցուցեալ, և յանձն արտ-րեալ զնոսա սրբոյ Եպիսկոպոսին Սամուէլի, այսմ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կող-մանս Հայոց մեծաց. և եկեալ ի սովորական տե-ղիսն, զընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ և ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնը ևս նորագործ իրացն. որք իրրե լուան, առաւել գոհանային զպարգեցն Աստուծոյ:

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երա-նելեացն՝ զիւրեանց ազգին զգպրութիւն առաւել յարգել և զիւրացուցանել, ձեռն ի զործ արկա-նէր ի թարգմանել և ի զրել մեծն իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն. Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացւոց, զՅով-սէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրաբատեան գաւառէն ի կողք զեղչէ, զի յԱսորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց գաւանդութիւնս, Հայերէն գրեալս դարձուցեն: Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքե-

ցանն, և կատարեալ զհրամանսն, և առ պատուա-կան հարսն առաքեալ, անցեալ գնային ի կող-մանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ Հելլենական լեզուին: Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցե-լոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշ-խարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեռնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կորիւնս, և մատուցեալ յարէին յեզնիկն, իբրև առ ընտանեցոյն մննդակից՝ ի կոստանդինական քաղաքին, և անդ միաբանութեամբ հոգեոր պի-տոյիցն՝ զինդիրն վճարէին: Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հարց յետ այնը աւանդու-թեամբք, և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գալին երեկով աշխարհին Հայոց, և առաջի դր-նէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բար-բառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիս զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնա-կաւ՝ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութա-նակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանիչն: Եւ այնոլէս զամենայն ժամանակս

իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին հարքն՝  
զտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալք և շահա-  
ւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առըն-  
թերակայից լինէին. մանաւանդ զի ունէին պա-  
տուիրանս զգուշացուցիչս յաստուածակարգ պատ-  
գամաւորացն. յորոց առաջինն հրամայէ՝ թէ՝  
«Յօրէնս տեառն խորհեսցիս ի տուէ և ի գիշե-  
րի». և երկրորդն հանգոյն պատուիրէ, թէ՝ «Միտ  
դիր ընթերցուածոց միսիթարութեան վարդապե-  
տութեան, մի անփոյթ առնել զշնորհացդ որ ի  
քեզ են. յայդ խորհեա և ի դոյն յամեսաշիր. դայդ  
եթէ առնիցես և զանձն ապրեցուցես, և զայ-  
նոսիկ որ քեզն լսիցեն»:

Ապա յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և  
բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երա-  
նելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրա-  
պատումտ, շնորհագիրս, բազմագիմիս ի լուսա-  
ւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց  
կարգել և յօրինել. լի ամենայն ճաշակօք աւե-  
տարանական հաւատոցն ճշմարտութեան. Յորս  
բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւո-  
րացս աստի, առաւելագոյն վասն յարութենա-  
կան յուսոյն առ ի հանդերձեալսն՝ յերիւրեալ  
կազմեալ. զի հեշտընկալք և դիւրահասոյցք տիս-  
մարագունիցն, և մարմնական իրօք զբաղելոցն  
լինիցին, առ ի սթափել և դարթուցանել և հաս-  
տահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, Վրաց  
և Աղուանից, զամենայն ժամանակս կենաց իւրոց,  
զամառն և զձմեռն զտիւ և զգիշեր՝ անվեհեր և  
առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանական  
և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց  
և իշխանաց, և ամենայն հեթանոսաց և անընդ-  
դիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յի-  
սուսի անուն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի  
քրիստոսազգեստ և հոգեղին վառեաց, և բազում  
բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց  
ի բոնաւորաց թողութիւն արարեալ՝ կորցեալ<sup>32</sup>  
զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի: Եւ բա-  
զում մուրհակս անիրաւութեան պատառեաց, և  
բազում սգաւորաց և կարձամտելոց՝ միսիթարա-  
կան վարդապետութեամբն զակնկալ յուսոյն ըստ  
յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ Փրկչին  
մերոյ Յիսուսի Քրիստոսի նօթճեաց. և զամենայն  
միանգամայն յաստուածպաշտութեան պայման  
անդ փոխեաց:

Եւ դարձեալ բազում և անհամար գունդս վա-  
նականաց, ի շէնս և յանշէնս, դաշտականս և լեռ-  
նականս, անձաւամուտս և արգելականս բնակե-  
ցուցեալ հաստատէր: Զորս ընդ ժամանակս ժա-  
մանակս իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ,  
առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մե-  
նաստանացն, և երթեալ լեռնակեաց սորամուտ  
ծակախիթ եղեալ զառօրէական զկերակուքն խո-

տաբուտ ճաշակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձն տային, Մանաւանդ որոց հայեցեալ ի միխթարութիւն առաքելական բանիցն, թէ՝ «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի՝ յայնժամ գորացեալ լինիմ». և թէ՝ «Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբ», զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի»:

Անդ էր այնուհետև չարբենալ գինւով, այլ առաւելուկ հոգւով, և պատրաստել զսիրտս երգօք հոգեսրօք, ի փառս և ի գովութիւն<sup>33</sup> Աստուծոյ: Անդ կըթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդուրական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսադիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղօթք աղերսալիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած, և նորին հոգեկրօն արուեստիւն՝ հանէր աւուրս բազումս յանապատ տեղիս. մինչև ազդ<sup>34</sup> լինէր յերիցանց, իրաց ինչ օգտակարաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յօնականութիւն շնորհօքն Քրիստոսի: Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցօք իջեալ ի թիկունս զիպացն պատահելոց, և վճարեալ գորութեամբն Աստուծոյ, և յորդորագոյնս և պարարտագոյնս և անփակ բերանով՝ զվարակս վարդապետութեանն ի սիրտս լսողացն

ծաւալեցուցանէր: Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր, վասն անձին և վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են ձշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնս՝ կանոն աշակերտելոցն գնել. մանաւանդ յուշ առնելով զակրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ: «Քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»: Որոյ բազում առեալ զաշակերտոն ուրոյն, և աննիազական անձամբն օրինակ կարօտելոցն լինէր. յորժամ ի Թաքօրական լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, և յորժամ ի նմին լերին զկանոնական զազօթս առնէր, մինչդեռ աշակերտքն ի Տիբերական ծովուն նաւէին: Եւ դարձեալ յաւուրս բաղարջակերացն յօրինական տօնին՝ զգիշերոյն աղօթքն և ցայգոյ, ի Զիթաստանեաց լերինն առանձինն մասուցանէր: Ուստի և յայտնի իսկ է առանց խուզելոյ, եթէ՝ ոչ վասն անձին ամենատէրն, այլ համաշխարհի յուսումն զայն գործէր. որ է օրինակ ամենայն հնազանդելոց. վասն որոյ ասէր իսկ, «Արթուն կացէք, զի մի ի փորձութիւն մտանիցէք»:

Իսկ արդ եթէ թեթևագոյն<sup>35</sup> արուեստից՝ պակասագոյն են ի գիտութենէ<sup>36</sup> ազգք երկրածնացս, որչափ այնմ արուեստի ոք համարեսցի և անգիտանալ՝ որ ընդ Աստուած զիսօսան կատարէ. որով երանելին Պաւղոս ամենեցուն տպիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյց չողին ի թի-

կունս հասանել՝ անմռունչ հեծութեամբ բարեխօս գիտէ: Իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ ուկաւ Յիսուս առնել և ուսուցանել», ապաքէն առնէ և ուսուցանէ, և ոչ եթէ զի պարզեցէ իմանալի է: Եւ բարեխօսել նորա վասն սրբոց, և բարեխօսել Հոգեւոյն սրբոյ առ ի վարդապետելոյ մեզ. զի ընդ միմեանց բարեխօսելն գիտելի է. քանզի միապատիւ է աստուածականն և ոչ բազմաբար: Իսկ երանելի առաքելոցն ընկալեալ ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարօտական անձանցն մատակարարէին, և ապա աշակերտացն բարձեալ տանէին. երբեմն առանձինն՝ և երբեմն ժողովրդովքն գումարելովք՝ զիմառն Քրիստոսի առաքելովքն բարձրացուցանէին. քանզի առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր զբօանաց առանձինն առհմանել՝ և միայն աստուածալաշտութեանն պարապել, զոր և մարդարէքն գործէին. որք ի լեռինս և յանապատս և ի փալարս վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն զծառայութիւնսն հարկանէին:

Նոյնպէս և ամենայն հարքն՝ որք յաջորդեցան, յառաքելական կանոնաց կրեալ անձամբք զլաւութիւնս բերէին վերջնոցս օրինակ. ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ, և ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակէր. Եւ այնպէս յառաջ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լցեալը,

պարարտացեալք, խաղացեալք<sup>37</sup> գային ի բաղում  
ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք՝ ի նմին  
հանապազորդեալք:

Յայնմ ժամանակի բերեալ երկեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատռմք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Թէոդիոս անուն: Վասն որոյ սիւնհօգոսական հայրապետացն՝ Եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազգ առնեին՝ ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխինչ սատանայական յարիցէ:

Յետ այնորիկ դէպ լինէր նոմին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք, և վայելչացեալ աստուածաբեր պտղոցն ըարութեամբք, յառաջնումն ամի՞ Յազկերախ որդւոյ Վուամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի՝ ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին. յերկրորդ<sup>38</sup> ժամոււ աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւլոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ. հայեցեալ ի մարդարէին, որ ասէր, «Ի ձեռս քո յանձն առնեմ զհողի իմ». և Ստեփան-

նոսի երանելոյ, որ ասէ, «Տէր Յիսուս, ընկալ  
զհոգի իմ»:

Հստ նմին օրինակի՝ և նորա ապսպրեալ  
զանձն և զմնացեալս՝ ամենապահ շնորհացն Աս-  
տուծոյ. զոր և առեալ վաղվաղակի ամենայն  
հանդերձելովք, ձեռնասուն աստուածաէր պաշ-  
տօնէիցն իւրոց. որոյ գլխաւորին Երեմիա անուն  
ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ  
աստուածաէր իշխանակնաւ միով, որ անուա-  
նեալ կոչէր Դուստր. որ էր կին Վարդանայ,  
զոր ի վերնոյն <sup>39</sup> յիշեցաք, և բազում ամբոխից  
սրբոց ժողովոց, բարձեալ զսուրբն սաղմոսիւք և  
օրհնութեամբ և հոգեոր բարբառով, յետ սակաւ  
ինչ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր ի Տարօն հա-  
սուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշտիշատ:  
Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սլր-  
բոցն, հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք  
եղեալ և կնքեալ քրիստոսական <sup>40</sup> կնքով՝ և գո-  
րինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այ-  
նուհետեւ իւրաքանչիւրն դառնային: Որոց և նոյն-  
պէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան  
զնոյն յիշատակն տօնախմբեն:

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշ-  
թոցէ ասեմ, բազում անձկայրեաց արտմու-  
թեամբ և արտօսրագութ ողբովք և ծանրաթա-  
խիծ սգովք պաշարեալ դնէր. զի թէ առաքեալն  
սուրբ, ոչ գտեալ առժամայն զլնդելակիցն զՏի-

մոթէու՝ անհամգիստ զհոգւոյն ասէ, որչափ ևս  
առաւել զմիանգամայն զհրաժարելոցն՝ սաստիկ  
կիրս մնացելոցն է համարեալ: Բայց թէպէտ և  
միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուար-  
թանալ, սակայն զաւետարանական ընթացն, և  
զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ, շնորհօքն  
Աստուծոյ առանց պակասութեան տանէր, և  
առաւել փութայր գուն եղեալ՝ զամենեսեան յոր-  
դորելով առ բարեացն քաջութիւն: Եւ զցայգ և  
զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուա-  
ծովք և բարձրագոյն բարբառովք՝ աստուածա-  
դիր պատուիրանացն հրամանու ուշ առնելով,  
զգուշացուցանելով ամենայն մարդոյ, մինչի բազ-  
մագոյնս և զդժուարագոյն վարուց կըթութիւնն.  
մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ տէրու-  
նական հասակին զօր վախճանին. չտայր քուն  
աշաց և ոչ նիրհ արտեանաց՝ մինչի հասանել ի  
հանգիստն տեան:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ  
զհոգեոր եռանդն ածէր, և բազում թուղթս խրա-  
տագիրս և զգացուցիչս ընդ ամենայն զաւառս  
առաքէր, անդէն ի նմին ամի՝ յետ ամսոց վե-  
ցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ,  
լինէր հանդերձ սրբով վարդապետով բանակն  
Հայոց յԱյրարատեան ի նոր քաղաք, և նովին  
հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսա-  
կոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հի-

ւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեացեալ և սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ գամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ. վասն նոցա օգնականութիւն հայցէր:

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնում Յովսէփի, զոր և ի սկզբան գրեցաք. երկրորդին Թաղիկ. արք ըդդաստք՝ զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն: Ի զինուորական կողմանն, առաջնումն վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց մեծաց. և երկրորդին Հմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք երկիւղածք հրամանակատարք վարդապետական հրամանաց: Եւ մինչզեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձև երեէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ յընկերէ պատմեալ, Եւ սորա սրբոցն զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զհեռաւորս օրհնութեամբ պսակէր, և զհաճոյական ազօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեաւ:

Զոր առեալ վահանաց և Հմայեկի կազմու-

թեամբ վախճանելոյ, հանգերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ, և հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և ամենայն լուսաձաճանչ գընդիւն, և այսու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն, յօշականն ելանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն աներևոյթ լինէր, և նոքա իւրաքանչիւր դառնային: Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողեցան Վահանաց Ամատունւոյ, քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք քանդակելով, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ, որոյ սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ոսկով և արծաթով և ակամբք պատուականօք՝ ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմոյ և արեանն Քրիստոսի պատրաստեաց, և ամենայն սրբովք ի միասին գումարելովք խաչակրօն վկայիցն Քրիստոսի, հանգերձ երանելեաւն Մաշթոցիւ, ի հանգիստ խորանին փոխէ: Եւ զնորին աշակերտ Թաղիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն, հանգերձ եղբարբք երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոցն ի վասս Աստուծոյ կարգէին, և գլխաւորս, վերակացուս աեղապահն յայտ արարեալ հարցն կատարելոց<sup>41</sup> որոց առաջինն Յովսէփի գլխաւոր ժողովոյն, և երկրորդն այլ աշակերտ Յովհանն անուն. այլ իսկ

սուրբ վարդապետասէր և ճշմարտապատռմ։ Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց. մենամարտիկ երկպատական բռնութեանն ի Տիգրոն քաղաքի, վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ և զխոստովանողական անուն ժառանգեաց. ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն հայոց։

Իսկ բարեացապարտին Վահանայ, յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր, որ աշխարհածնիւն հայրենեցն սեպհական ողի գտեալ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից վայելէր. և զի ըստ օրինակի գրելոց առ ի մէնջ հարքն ի կափարումս <sup>42</sup> դարձան։

Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ գայս կարգեցաք, այլ որոց մերի իսկ ականատես եղեալ կերպարանացն՝ և առընթերակաց հոգեորական գործոց, և լսող շնորհապատռմ վարդապետութեանն, և նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն։ Ոչ սուտապատռմն ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից գհօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, և ի նշանագիմակացն քակելով զհամատուրսն կարգեցաք, որք ոչ միայն մեզ, այլ և որ զատեանսն ընթեռնուն յայտնի է, Քանզի չէաք իսկ հանդուրժողը՝ զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն, այլ ի դիւրագոյն և ի հեշ-

տագոյնս, յառաքելական անդը զանձինս պատըսպարեցաք. որոյ անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն, առ ի մանրակտիտ առնելոյ զկարևորագոյնս պատմելոյ՝ զհանգամանս՝ ասացաք, ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապարծ և կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգեոր ծնընդոց իւրեանց, և որք նոքօք աշակերտելոց իցեն յազգս ազգաց։

Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամք քառասուն և հինգ, և ի գպլութենէն հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս։ Թագաւորեալ Դիսմոնայ Պարսից արքայի ամս վեց, և Յազկերտի ամս քսան և մի. և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վուամայ, վախճանեցաւ երանելին։ Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն կրմանայ արքայի, մինչև ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վուամայ, և գպլութեանն հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն։

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒՑ  
ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵՍՐՈՎԵՅՑ  
ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ  
Կ Ո Ր Ե Ա Ն

ԶԱՄՔԱՆԱԶԵԱՆ ազգիս և ղհայաստան աշ-  
խարհիս զաստուածատուը ջնորհս, զզրոյն զիւտ,  
և զվարդապետութեանն պարգևի Տեառնէտուեալ,  
թէ յորհում ժամանակի և որպիսի արամբ լու-  
սաւոր վարդապետութեամբ, պատմեսցուք ձեզ,  
և զնորին հրեշտակակրօն վարս առաքինութեան:

Եր այրս այս Մեսրովը, ի Տարան գաւառէ,  
ի Հացեկաց գեղջէ, որդի Վարդանայ. ի մանկու-  
թեան աստիսս վարժեալ Հելենացւոց դպրու-  
թեամբն, և եկեալ ի դուռն Արշակունեաց թա-  
գաւորացն Հայոց, կացեալ յարքունական դիւա-  
նին, լինէր սպասաւոր արքայատուը հրամանին:  
Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի զի-  
նուորական կարգս և յառաջադէմ, և սիրելի եր  
ամենեցուն մեծամեծաց և փոքունց, իմաստու-  
թեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն:

Յետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ  
մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զա-

մենայն զբաղմունս, և առեալ զիսաչն պարծա-  
նաց՝ ըստ աւետարանական հրամանին՝ ելանէր  
զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի: Եւ հա-  
ճեալ զհրամանաց պայման, ի խաչակիր գունդն  
Քրիստոսի աշակերտացն խառնի. և զկրօնս միան-  
ձանց յանձն առեալ յաւէտ կրօնաւորէր: Եւ բա-  
զում և ազգի ազգի վշտակցութիւն ըստ աւետա-  
րանին կրէր. և ամենայն կրթութեան հոգեորացն  
զանձն տուեալ՝ կրօնաւորէր ի քաղց և ի ծա-  
րաւ, 'ի ցուրտ և ի մերկութիւն. խոտաբուտ  
եղեալ, խարազնազգեստ և գետնատարած ան-  
կողնօք, և զհանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր  
տքնութեամբ ի թօթափել ական վճարէր բազում  
անգամ. և զայս առնէր ոչ սակաւ ժամանակս:  
Եւ գտեալ զոմանս զզաստասէրս յինքն յարե-  
ցուցանէր, աշակերտել նմին աւետարանական  
կրօնաւորութեանն: Եւ ամենայն փորձութեանց  
ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տա-  
րեալ, և նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ  
ի հանդէս ճգնաւորական հաճոյ Աստուծոյ և մարդ-  
կան երեւեալ:

Առեալ այնուհետև երանելոյն զաշակեր-  
տեալսն իւր՝ երթայր ի Գողթն. որում ընդ առաջ  
լինէր իշխանն Շամբիթ, և սիրով ընդունէր որ-  
պէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. և բարեպաշ-  
տութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հա-  
ւատոցն ի Քրիստոս: Իսկ երանելոյն անդէն

վաղվաղակի զվարդապետական շնորհան ի մէջ առեալ, ուսուցանէր զբնակիչս քաղաքին և գաւառին, կամաւ իշխանին մատակարարութեամբ։ Զի էր ինչ ի նոսա ի հեթանոսական սովորութեանցն, զորս դարձուցանէր ի զիտութիւն ճըշմարտութեան, և զամենեսեան լուսաւորէր շնորհաց բանիւն։ Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երեեալ, զիւաց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց։ Վասն որոյ առաւել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրօն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոյցա աւանդեցաւ ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի՝ զրովք սրբովք։

Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն՝ առ աշակերտեալսն. իսկ երանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս, որով նուազութիւնն յառաւելութիւն գայցէ զրով։ Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր առ Սուրբն Մահակ հայրապետն Հայոց, յաղագս զրոյ նշանագրաց. եղիտ զնա առաւել ևս փափաքող այնմ։ Եւ յետ բազում ջանից և աշխատութեանց և ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինելով՝ յԱստուծոյ խընդ-

րէին որում ցանկային։ Եւ մեկնեալ ի միմեանց, և յանձն առեալ զիստամբերութիւն՝ ճպնէին առաւել քան զառաւելու։

Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն Վռամշապնոյ, որ և նա այսմ նախանձայոյգ եղեալ, առաքեն զՄեսրովք աշակերտօքն հանդերձ ի Միջագետս Ասորւց։ Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց համբաւէր զիտութիւն։ Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւց առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում ցանկային։ Եւ յետ բազում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբառ և զբանս ալփարետացն ըստ հայերէն լեզուիս։

Յայնժամ հաւատով առ Աստուած ապաւինի, և աղօթս արտասուլիցս առ Աստուած մատուցանէր, և հայցէր յամենեցունց Տեառնէն զտիւ և զգիշեր՝ ցուցանել զփափաքելին նշանագրաց։ Եւ տեսանէր ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի՝ երեւութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, զբելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք զծին ունէր քարն. և ոչ միայն երկութացաւ, այլ և հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամանի ի միտս նորա հաւաքեցաւ։ Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր՝ հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ ի Մամոս

էր միայնակեաց. կերպածեեալ զգիրն ըստ հրաշմանի Մեսրովբայ վարդապետին և երանելոյ, փոխադրելով ըստ հայերէն ըստ անսայթաքութեան սիդոբայից հելենացւոց:

Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակեալ զքսան և երկուս յայտնիսն, զհին կտակարանսն յեղուլ ի հայ բան: Եւ աշակերտք նորա Յովհան և Յուսէփի ի նոյնս նպաստ լինէին: Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն:

Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս փոքր: Եւ եկեալ երանելոյն Մեսրովբայ Հայոց վարդապետի, և բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Հայոց, և առ թագաւորն Հայոց Վուամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածադիմ: և գոհ հութիւն և փառս ամենեցունց արարչին մատուցանէին զնորոգատուր պարգևացն որ տուաւ նուցա ի վերուստ: Եւ ժողովեալ մանկունս ուշեղս և քաջուսմունս, փափկածայնս և յերկարոգիս, և դպրոցս կարգեալ յամենայն գաւառս և ի գեւզս հրամանաւ սուրբ հայրապետին և թագաւորին, ուսույց զբնաւ ամենայն աշխարհս Հայոց:

Երթեալ և յաշխարհս Վրաց երանելի այրն Աստուծոյ առնէ և նոցա նշանագիրս ըստ տուեցելոյ ի նմա ի վերուստ շնորհացն Աստուծոյ.

և վարդապետս թողեալ անդ ի քաղաքաց քաղաքաց ուսուցանել զմանկունս նոցա: Եւ ինքն յԱղուանս երթեալ և անդ նորոգէր ըստ նմին օրինակի զնշանագիրս և զուսումնասիրութեանն աւանդս, և վարդապետս թողեալ անդ դառնայր ի Հայս: Եւ գտանէ զսուրբն Սահակ հայրապետ ի թարգմանութեան պարապեալ շնորհօքն Քրիստոսի յԱսորւոյն, ոչ լինելով Յունի, զի ի Մերուժանայ այրեալ էին յոյն գրեանն հանուր աշխարհիս. զի ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային Պարսկաց վերակացուքն Յոյն ումեկք ուսանել զդպրութիւն իւրեան մասին, այլ միայն Ասորի: Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետքն Սահակ և երանելին Մեսրովբ. և գնացին զկողմամբք արևմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց:

Եւ առաքէ սուրբն Սահակ զՄեսրովբ առ կայսը Թէոդոս և առ հայրապետն Ատտիկոս հանդերձ թղթովք, և թոռամբն իւրով Վարդանաւ, զգացուցանել նոցա զգալուստն իւրեանց, և զի ընդունիցին բնակիչք աշխարհիս զնոր ուսումն վարդապետութեանս Հայոց: Որոց հանդիպեալ զօրավարին Անատոլեայ, ոչ փոքր ինչ արաք ընդունելութիւն նոցա. զի յառաջագոյն լուեալ էր զլուր առաքինութեան երանելեացն Սահակայ և Մեսրովբայ. և ի ձեռն թղթոց յառաջագոյն զգացուցանէր կայսեր. և առնու հրաման արժանաւ-

պէս առաքել և բարեփառութեամբ յուղարկել ի թիւզանդիոն։ Եւ յանդիման եղեալ թագաւորին և հայրապետին, և ձեռնադրեցին զՄեսրովը Եկեղեսիկաթիկոս։ և գրեցին զնա ընդ առաջին երանելի վարդապետոն։

Եւ գարձան հանդերձ թղթովք, և եկեալ հանդիպէին որբոյն Սահակայ, և զօրավարին Անատուեայ։ Որոց ընկալեալ զթուղթս և զհրամանս՝ յոյժ ուրախ եղեն և փառաւորութիւն ամենեցուն Տեառն և Աստուծոյ հասուցին։ Եւ փութայր վաղվաղակի զհրամանսն կատարել. և առաքէ ի գաւառս և ի քաղաքս Հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկուոյ ի տեղիս տեղիս, և դարմանս և ոռձիկս կարգէր յարքունուստ, որպէս զի անզբաղապէս ուսցին։ յորս և երամելին Մեսրովը զլուսաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկունսն ուսուցանէր զնշանագիրն։ և վարդապետս կացուցանէր աշակերտացն, զի առփոքը փոքը զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն։

Յետ այնորիկ ձեռն արկանէր զժպիրն և զկամակոր աղանդն Բորբորիանոսացն քննել. և որք ոչն գային յուղութիւն հաւանական բանին՝ սաստկագոյն խոշտանդանօք պատուհասէին ի բանդ և ի կապանս, և յայլ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկուիսկ

թենէ գտանէին Աստուծոյ ատելիքն, ապա խանձեալս և մրեալս և պէսպէս խայտառականօք հաւածէին յաշխարհէ։

Իսկ երանելիին զիւր վարդապետութեանն պայման արարեալ, պկսեալ և վճարեալ, և բազում շնորհագիր մատեանս զհարց Եկեղեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն խորութիւն. և լքեալ զեղոյր զամենեքումք ի բնակիչս աշխարհին հոգեւոր վայելչութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն։ Եւ յանձն արարեալ զամենեսեան ամենասպահ շնորհացն Աստուծոյ՝ ինքն դառնայր ի կողմանս Հայոց, և շրջէր զամենեքումք, հաստատէր զաշակերտեալսն ի ճշշմարտութեանն հաւատսն։ Եւ եկեալ հանդիպէր սրբոյն Սահակայ, և պատմեալ զեղեալսն առ ի նմանէ, և միաբան օրհնեցին զԱստուծ ի վերայ նորոգատուր պարզեւացն տուելոց նոցա ի վերուստ։

Յետ այսորիկ ուշ եղեալ երկոցունց երանեացն զիւրեանց ազգի զդպրութիւնն առատացուցանել և առաւելուլ՝ ի թարգմանել և ի գրել ըստ յաշողութեանն Աստուծոյ։ Վասն որոյ առաքեն երկուս յաշակերտացն ի քաղաքն Եղեսայ զեզնիկ և զթովսէփ, զի յԱսորի բարբառոյն զսուրբ զիւրս նոր թարգմանեսցեն ի Հայ լեզու, և զըով աւանդեսցեն իւրեանց աշխարհիս։ Իսկ նոքա եկեալ կատարեցին զհրամայեալսն, և ի

ձեռն հաւատարիմ եղբարց առ պատուական հարս  
իւրեանց առաքեցին զգրեանն. և ինքեանք ան-  
ցեալ գնացին ի կողմանս Յունաց ի քաղաքն  
Բիւզանդիոն յուսումն իմաստասիրութեան. որ և  
ուսեալ և աեղեկացեալք՝ թարգմանիչք եղեալք  
ըստ Հելենականի լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցա-  
նելոյ, դէպ լինէր եղբարց ոմանց ի Հայաստան  
աշխարհէս, երթալ ի կողմանս Յունաց՝ ի քա-  
ղաքն կոստանդնուպոլիս, որոց անուանքն էին  
միումն Դեռնդ և միւսումն Կորիւն. և երթեալք  
յարին յեզնիկն, իբր առ ընտանի և սննդակից իւ-  
րեանց եղբայրութեանն. և անդէն միաբանեալ  
գնոգեւոր պիտոյիցն խնդիր վճարէին: Յորոց յետ  
այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր  
գրոցն, և բազում շնորհագիր հայրապետացն ա-  
ւանդութեամբ և նիկիայ և Եփեսոսի սուրբ Ժո-  
կովոցն կանովոքն՝ դարձեալ լինէին յաշաբն  
Հայոց և ի հայրենիս իւրեանց, և առաջի դնէին  
սուրբ հարանցն զբերեալ կտակարանն եկեղե-  
ցւոյ սրբոյ:

Իսկ երանելեացն սրբոյն Սահակայ և Մես-  
րովբայ զեկեղեցական զգրոց զգումարութիւնն  
կանխաւ ի յունարէն բարբառոյ ի հայերէն թարգ-  
մանեալ, և զբազումս զհայրապետացն սրբոց  
ճշմարտապատում իմաստութիւնս յօրինեալ ի հայ  
լեզու: Դարձեալ յետ այսորիկ առեալ հանդերձ

Եղնկաւ զյառաջաղոյն զյանկարծաղիւտ զփու-  
թանակի թարգմանեալսն՝ համատաէլ ճշմարիտ  
օրինակօքն բերելովք. և շատ եւս այլ մեկնու-  
թիւնս գրոց՝ սրբոց՝ թարգմանէր ըստ հայերէն  
նշանագրացն: Եւ այնպէս զամենայն ժամանակս  
իւրեանց՝ ընթերցուածոց գրոց սրբոց պարապէին  
երանելի սուրբ հարքն զտիւ և զգիշեր. և նովին  
ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեայ ու-  
սումնասիրաց առընթերակացն լինէին. մանաւանդ  
զի ունէին եւս զպառուիրակսն զգուշացուցիչն  
յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առա-  
ջինն պատուիրէ՝ Յօրէնս տեառն խորհելի տուէ  
և ի գիշերի. և երկրորդն առէ. Միտ դիր ըն-  
թերցուածոց գրոց մխիթարութեան, վարդապե-  
տութեան. մի անփոյթ առնէր զշնորհացդ որ ի  
քեզ են. յայդ խորհեաց և ի գոյն կանխեսջիր,  
զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի  
լիցի. զգոյշ լինիջիր անձինդ, և ի գմին յամես-  
ջիր. զայդ եթէ առնիցեա, և զանձն ապրեցուցես  
և զայնոսիկ որ քեզն լուիցեն:

Ապա դարձեալ յետ այնպիսի լուսաւոր վար-  
դապետութեանն, սկսեալ երանելոյն Մեսրով-  
բայ ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնոր-  
հագիրս, բազմադիմիս ի զօրութենէ և ի հիւ-  
թոյ գրոց մարգարէականաց և առաքելականաց  
կարգեալ և յօրինեալ՝ լի ամենայն ճաշակօք ա-  
ռետարանական հաւատոցն ճշմարտութեան. յորս

բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւուրացս աստի առ ճշմարտութիւնն ըերելով, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալսն յերիւրելոյ նկարեաց. զի հեշտընկալք և դիւրահամոյցք տիմարագունացն և մարմնական իրօք զբաղելոցն՝ ուսցին սթափել, և ի գուարժացուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

Եւ այսպէս ընդ ամենայն կողմանս Հայոց և Վրաց և Աղուանից՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց՝ զամառն և զձմեռն զախւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ զնորոգագիք վարդապետութիւնն ուսուցանէր. Եւ իւրովի իսկ ճանապարհորդեալ աւետարանական և ողջապատումն բանիւ յաղագս հաւատոյ և վարուց առաջի թագաւորաց և իշխանաց և ռամկաց, անընդդիմաց ի հակառակորդաց ըստ տուելոյ նորա ի վերուստ շնորհի՝ ուսուցանէր ի փառս և ի գովութիւն Աստուծոյ, և զամենայն ոգի քրիստոսասէր և ոգէզէնս վառէր. և բազում բանդականաց և կալանականաց և տագնապելոց ի պէսպէս վտանգից՝ Քրիստութիւն ընձեռեաց, կորզելով զտարակուսեալսն ահաւորութեամբ զօրութեամբ փառացն Քրիստոսի՝ ի գովեստ Քրիստութեան աւետարանին. և բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց. և զբազում սգաւորս և կարճամիտս, միփթարեաց վարդապետութեամբն, և նուաճեաց ակնկալու-

թեամբ յուսոյն ի համբերութիւնն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. և զամենայն հաւատացեալս միանգամայն զարս և զկանայս յաստուածպաշտութեան պայման անդր փոխադրեաց:

Եւ դարձեալ անհամար և գունդս գունդս ի շէնս և յանշէնս ի ճշմարտութեան աւանդս սուրբ հարցն հաստատէր ի փառս և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն: Նա և ի դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և լեռնականս և արգելականս, բնակեցուցեալ կրօնաւորիլ առ ի բարեպաշտութեանն ջանս, զոր ոչ միայն բանիւք և վարդապետութեամբ, այլ և արդեամբք զանձն օրինակ կացուցանէր միանձանց, հանապազորդ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և արտասուօք, խոնարհութեամբ և հեզութեամբ և կուսութեամբ նահատակեալ. և ընդպէս հանապազորդեան թշնամոյն քաջապէս արիացեալ. նա և ի պատուոյ և ի փառաց խուսափեալ, երթեալ սորամուտ ծակախիթ լինէր, և զառօրեայ զկեանսն խոտաբուտ ճաշակօք վճարէր. Եւ այնպէս վշտացեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղգարար, հայեցեալ ի միթթարութիւն առաքելական խրատուն, թէ՝ Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զօրացեալ լինիմ. և եթէ՝ Լաւ լիցի ինձ մնալ ի տկարութեան, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի:

Անդ էր զուարձանալ հոգւով՝ ուր ուրեք դադարեալ լինէր. և ոչ պայծառանայր գինով, այլ երգօք հոգեսրօք ի փառս և ի գովութիւն Աստուծոյ. ի կրթութիւնս միշտ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց քաջալերութիւնս յորդորականս, լուսաւոր կարգաց և տօնից զանձինս ճգնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ ի յառաջադէմ ընտրութիւնս պսակահամբար քրիստոսադիր կիտին: Եւ եռայր հոգւով յաստուածպաշտութեանն մրցարան վերին կոչմանն, աղերսալի աղօթիւք և փարելի պադատանօք և հաշտելի խնդրուածօք յամենեցունց Տեառնէն, վասն ամենեցուն կենացն յաւիտենականաց արժանի լինել մասին սրբոցն ի լոյս: Եւ նովին հոգեկրօն վարուք կայր յանապատ տեղիս. մինչ ազդ լինէր իրաց ինչ օգտակարաց ի կողմանս յաշակերտեալսն, յայնժամ իջանէր յօդնականութիւնն և վճարէր զպէտս պիտոյից՝ ուր հոգեսր կարգաց էր նուազութիւնն, շնորհօքն Քրիստոսի: Եւ յորդորագոյնս և պարարտագոյնս անփակ բերանով իմաստութեամբ զվտակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր. և զայս առնէր զամենայն ժամանակս իւր երանելի վարդապետն Հայոց Մեսրովք: Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւնն կանովս աշակերտացն առնել. որպէս զՔրիստոսի և Աստուծոյ մերոյ է

ուսուցանել ըստ տնօրէնութեանն. քանզի սկսաւ, ասէ, Յիսուս առնել և ուսուցանել, և եթէ, Հայեցարուք յառաջնորդն հաւատոց և ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ առաջի կայր՝ յանձն էառ զխաչն, արհամարհեաց զամօթ: Եւ զինչ այս վշտաց հատուցումն ցուցանի հաւատացեալ ի Քրիստոս Յիսուս. Նստաւ, ասէ, ընդ աշմէ մեծութեամն ի բարձունս, աղէ ածէք զմտաւ որ այսպիսի համբերութիւն վասն մեր կրեաց, զի մի աշխատ լինիցիմք և լքանիցիմք ի վարս առաքինութեան. զի ոչ վասն անձին ամենատէրն զայս առնէր, այլ վասն համաշխարհական փրկութեանն, յուսումն աստուածասիրաց որ ընդ նոյն ճանապարհորդեն ի հանգերձեալսն, որ են օրինակ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որպէս ճառք աւետարանին քարոզեն:

Իսկ արդ եթէ ի թեթևագոյն արուեստաւոր և հանճարեղ իմաստից տգիտանամք, որ ընդ աստուածախօսն կատարէ զշնորհացն ներգործութիւնն, որում երանելին Պաւլոս ամենեցուն տգիտանալ ասէ, այլ և յուշ առնէ զառաջնորդս կենաց բանին. Հայեցեալք, ասէ, յելս զնացից նոցա նմանողք եղերուք, և յուսումնս պէսպէս և յօտարաձայնս մի դանդաշէք, այլ առաքելոց և մարդարէից և երանեալ սրբոց հարցն հետևեալ ճշմարտութեանն աւանդից զոր նոքայն հորդեցին զանտայթաք ճանապարհն յերկնից արքայութիւնն.

և օրինակ աշակերտելոցն զհաւասս և զվարս բացայայտեցին գրովք սրբովք, երբեմն առանձինն խրատելով ըստ իւրաքանչիւրոցն օգտի, երբեմն ի ժողովս բազմամբոխս զփառս Քրիստոսի շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն բարձրացուցանէին, և յամենայն աշխարհակիր զբօսանաց ի բաց կալ, և միայն աստուածապաշտութեան պարապել. զոր և մարդարէքն և առաքեալքն յառաջագոյն գուշակեցին ըստ Պաւղոսի վկայութեանն. Շրջեցան, ասէ, լաշկամաշկօք և մորթովք այծենօք, կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք և յայրս և փապարս երկրի. և սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն՝ ստուգեցին զարդարութեան ճանապարհն աշակերտելոցն, որ տանի ի կեանսն յաւիտենից:

Ուստի երանելիս այս Մեսրովք բարձեալ բերէր զաւանդելոցն պատիւ ի փառս ամենեցունց Տեառնն, և զամենայն աշակերտեալմն իւրինոյն հանդէս յորդորէր. և այնպէս յառաջադէմ ամենայն աստուածահաճոյ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք պատրաստեալք և ամեթացեալք ի բազում ժամանակս աշակերտեալք առ ի նմանէ, նովին ի նոյն կանխեալք և ի նմին հանապազրդեալք ի փառս ամենասուրբ Երբորդութեանն:

Յայնժամ արք ոմանք հալածեալք ի ժողո-

վոյն եփեսոսի, որում անուն էր Թէոդորոս, ըստ Պաւղոսի Մամոստացւոյ և ըստ Նեստորի հերձուածոյն գիրս ստացեալ համաձայնս պարզամտացն և դիւրահաւանիցն, և եկեալ յաշխարհամեր՝ կամէին ուսուցանել զշար աղանդն: Վասնորոյ ի սուրբ ժողովոյն առաքեալ թուղթս ազդառնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրոբայ: Եւ նոցա ճշմարտապէս փութով զկամակոր հերձուածոյն ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն, զի մի ինչ ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական մերծեսցի:

Յետ այնորիկ դէպ լինէր փոխել յաշխարհէս երանելուոյն սրբոյն Սահակայ հայրապետին Հայոց՝ ճշմարիտ վարուք և ուղղափառ հաւատով, լցեալ աւուրք և երկայնակեաց ժամանակօք վայելչացուցեալ զամենայն աշխարհ Հայոց ի լուսաւոր վարդապետութիւնն, այնպէս հանգեաւ ի Քրիստոս, յառաջնում ամի երկրորդ Յազկերտիորդոյ Վուամայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ գաւառի ի գեւդն Բլուր, ի կատարել ամսոյն նաւասարդի, յերրորդ ժամու աւուրն պաշտաման, որ և զօր ծննդեանն ի նոյն աւուր: Եւ այնպէս զամբիծ հոգին սաղմոսերգութեամբ և աղօթիւք ծերունւոյն աւանդեալ զիոգին ի Քրիստոս, ասէ. ի ձեռս քո յանձն առնեմ զիոգի իմ, ըստ նախավկային բանի:

Բայ նմին օրինակի և նորա ապսպարեալ գանձն և դմբացեալսն զիւք գհօտն ամենապահ շնորհացն Աստուծոյ յանձն արարեալ՝ այնպէս փոխեցաւ յաշխարհէս։ Զոր առեալ վաղվաղակի պարսպէին հանդերձանօք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղման՝ իւր իսկ ձեռասուն աշակերտքն. որոյ առաջնոյն Երեմիա անուն, այր սուրբ և Երկեղած յԱստուծոյ, և այլք ընդ նմա, հանդերձ կնաւն Վարդանայ Մամիկոնենի. և բարձեալ զմարմին Երանելւոյն բազում ամբոխիւ, Եպիսկոպոսօք և քահանայիւք, սարկաւագօք և դպրօք, սախմոսիւք և օրհնութեամբ և Երգօք հոգեւորօք՝ ածին ի Տարաւն դաւառ ի գեւդն Յաշտիշատ. և անդ ի մարտիւ ըստական խորանին յարկեղս սրբոցն հանգուցանէին զսրբոյ առն Աստուծոյ զնշխարսն հանդերձ ամենայն պատուով. և կնքեալ քրիստոսանշան կնքոմն, և զյիշտատակ սրբոյն կատարեալ ի փառս և ի գովութիւն Աստուծոյ, այնուհետեւ յիւրաքանչիւրմն դառնային. զորոյ և զտօն յիշտատակի սրբոյն տօնախմբեն յերեսուն նաւասարդի ամսեանն բազում ժողովովք. և բարեխօսութեամբ սուրբ հայրապետին զիւրաքանչիւր օգուտ յամենեցունց Տեառնէն ընդունին։

Իսկ Երանելւոյ զուգականին զայս լուեալ, զսուրբ վարդապետէն ասեմ զՄեսրովբայ, տըրտմեալ և տիմրեալ լինէր, և յարտասուս Եղեալ

վարանէր զի ի նմանէ բարժանումն և զվախճան առն Աստուծոյ, և զսպառումն զարմից սրբոյն Գրիգորի. և հոգովք աարակուսեալ պաշարէր առ այնպիսի աղէտս. մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոք առ ի բարեպաշտութիւնն ջանս և առ լուսաւոր վարդապետութիւնն և առ վերակացութեան շնորհն, որ գեր ի վերոյ էր և քան զառաջինսն զիւր սուրբ հարսն, Յայսոսիկ մտալսոհ եղեալ ողբերգական բարբառով վարանէր. զի ոչ զոք ունէր համաշունչ՝ թէ ընտանեբար հոգացէ վասն Հայաստանեայց, և եւս այսոցիկ զԱստուած յիշէր և միմիթարէր ըստ սաղմոսերգովին, որ արար կամենայն և փոփոխէ անհաս իմաստութեամբ և մատակարարութեամբ։ Եւ զէնքն առաւել ևս յորդորէր ի կրօնաւորութեան կարգս, համանգամայնցն յաղթող լեալ էր կրօնաւորաց, ըստ Երկնային կոչմանն հանդիսանալ ի բարձրագոյնսն շնորհօքն Քրիստոսի՝ առանց հեղութեան։ Եւ յորդորէր զամենայն աշակերտեալսն առ բարեացն քաջութիւնսն, և յուշ առնէր ամենայն անձին զգուշանալ ամենայն անձին, ի վարս և ի գնացս խոնեմագոյն և հանձարեղ խրատուք. մինչ բազմաց խիստ և ծանր և դժուար համարեալ զվարուցն կրթութիւնսն Այլ նա զվերջինսն մոռանայր և յառաջաղէմսն նկատէր ծերունի հասակաւն, զմտաւ ածելով զմօտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց և ոչ

նինջ արտեւանաց մինչև ցօր կոչման ելանելոյ նորա յաշխարհէս:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր և զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն, և բազում թուղթս խրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն և յեւթ մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց, յԱյրարատ գաւառի ի նոր քաղաքն, ի նոյն հոգեկիր կրօնս, որպէս և յառաջագոյն ասացար, հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարութիւն՝ յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան: Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի միջոյ ձեռասուն աշակերտացն, և խառնել ի գունդս սրբոցն, թեթեւացեալ և սթափացեալ ի ցաւոցն, և կանդնեալ նստաւ ի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարածս յերկինս, զամենասուրբ զերրորդութիւնն օրհնէր, և յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայցեն հաստատուն ի հաւատս և ի վարս ուղղութեան, և առանց գայթակութեան կատարեսցեն զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի:

Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս, առաջնումն Յովսէփ, և երկրորդումն Թողիկ, արք զգաստք և զգուշա-

գոյնք. իսկ ի զինուորացն՝ առաջնումն հմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, և երկրորդին վահան՝ յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց մեծաց. աստուածասէրք և երկիւղածք յԱստուծոյ: Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ սքանչելի և խաչանշան լուսաւոր շողաձև երևէր ի վերայ ապարանիցն՝ յորում երանելին վախճանէր. զոր և ամենայն ուստիք ինքնատես լեալ և ոչ յընկերէն պատմեալ: Իսկ սրբոյն զսիրոյ և զմիաբանութեան պատուիրանն աւանդեալ և զհեռաւորս և զմերձաւորս օրհնութեամբ պսակեալ, և զհանգյական աղօթս հատուցեալ ի Տէր, անդէն վաղվաղակի աւանդեաց զհողին ի փառս ամենասուրբ երրորդութեանն:

Զոր առեալ Հմայեկի և Վահանայ կազմութեամբ վախճանելոց, հանդերձ աշխարհաժողով ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգեւորօք, մոմեղինօք վառելօք և ջահիւք բորբոքելովք և անուշանոտ խնկօք, և այնու խաչանշան յառաջախաղաց լուսաւոր նշանաւն՝ յԱւշականն ելանէին, և անդ ի մարտիրոսական յարկն հանգուցանէին զսուրբ այլն Աստուծոյ, և զօրինաւոր տօն յիշատակի երանելոյն կատարէին: Ապա նշանն աներեսոյթ լինէր, և նոքայիւրաքանչիւք տեղիս գառնային, փառաւորելով և

օրհնելով զԱստուած ի վերայ սքանչելեացն զոր  
Տէր եցոյց ի վերայ վարդապետին:

իսկ յետ ամսոց երից անցելոց ըստ յաջու-  
ղելոյն Աստուծոյ Վահանայ ամատունոյ քրիս-  
տոսամբիրի՝ կամեցաւ տաճար փառաց անուանն  
Աստուծոյ շինել յանուն սրբոյ վարդապետին, ի  
տաշածոյ վիմաց սքանչելապէս յօրինեալ խո-  
րանս և գեղեցկապէս կազմեալս. և անդ ի ներք-  
սազոյն խորանին զսրբոյն հանգիստն առնել, և  
վայելուչ պասուք ոսկեով և արծաթով և ակամք  
պատուականօք զառւնն Աստուծոյ և զսեղան կե-  
նարար մարմնոյ և արեանն Քրիստոսի զարդա-  
րէր. Եւ զնորին աշակերտն զգաստ և բարեպաշ-  
տօն զթողիկ՝ սպասաւոր նորին կացուցանէին՝  
այլ ևս եղբարք՝ կատարել զհանապազրդ պաշ-  
տօնն. Եւ որ վերակացուս ժողովրդեանն ըստ  
յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովսէփ և զՅով-  
հան կացուցանէին արս ճշմարտասէրս և ողջա-  
խոհն. որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն  
ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի  
բռնաւորաց, մենակոիւ մենամարտիկ ի Պարս  
ի Տիսպով քաղաքի վասն Քրիստոսի, յաղթու-  
թեամբ բազմաւ. որոց և զիստովանողական  
անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս  
վարդապետութեան դառնային յերկիրս հայոց:

իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս  
կենաց, ասպնջական ցանկալի ամենայն սրբոց

լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհա-  
կան որդի գտեալ՝ շնորհոքն Քրիստոսի մերձաւոր  
կենացն յաւիտենից լինէր:

Եւ արդ ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ  
զերանելեաց սուրբ հարցն զվարս և զվախճանս  
փոքր ինչ պատմելով՝ ի կատարումն զբանս ածից.  
ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ  
և մատենագրեալ զսա կարդեցաք, այլ որոց մե-  
զէն իսկ ականատես կերպարանացն և առընթե-  
րակաց հոգեորական գործոց սրբոցն. և լսողք  
շնորհապատում վարդապետութեանն. և նոցին  
սրբոց վարդապետաց արբանեալ ըստ նոցին ա-  
ւետարանական հրամանաց. ոչ առ սուտապա-  
տում յարմարեալ զբանս ի մեր գովութիւն զհայ-  
րենիսն յարգելով, այլ զյաճախագոյնսն թողեալ  
զառաքինեացն հանդէս, որ այժմ ծածկեալ է ի  
Քրիստոս և յայնժամ ընդ նմա յայտնեսցի փա-  
ռօք, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սըր-  
բոց իւրոց: Այլ սուդ ինչ ի նշանաւոր զիտա-  
կացն պատմելով՝ զհամառօտս պատմեցաք. որք  
ոչ մեզ է շահս, այլ և որք զմատեանս ընթեռ-  
նուն, յայտնեսցի արանցն քաջութիւն: Քանզի և  
ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն  
արարեալս սրբոցն զրով նշանակել զիւրաքան-  
չիւրան, այլ ի զիւրագոյնսն և ի հեշտագոյնսն  
զանձինս պարապեսցուք, և զանցեալ զբազմա-  
խուռն արգասեօք սրբոցն առ ի մանրակրկիտսն

առնելոյ թողաք, և զկարեւորագոյնսն սուղ ինչ  
մատենագրեցաք ըստ մերում կարի, ոչ ի պա-  
տիւ ընտրելոցն մերձաւորացն Քրիստոսի, որք  
ամենապայծառ հաւատով և վարուք ծանուցեալք  
եղեն, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց  
իւրեանց, և որոց նոքօք աշակերտելոց իցեն  
զգշմարտութիւն յազգս իւրեանց՝ աւանդեցաւ  
այս, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն Հօր  
և Որդոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յա-  
ւիտեանս յաւիտաենից. ամէն:



## ԺԱՆՈԹԱՊԻԹԻՒՆԵՐ

1. Միւս օրին. մատենանշան: 2. Միւս օր. Մտացն:
3. Միւս օր. Աստուածային: 4. Միւս օր. ասացելոց երա-  
նելոյն: 5. Յերկոսին օրինակն ևս գրեալ էր աւխար-  
հակիր: 6. Միւս օր. Լուսաւորութիւնսն: 7. Միւս օր.  
փայլին: 8. Յերկոսին յօրինակն ևս զարկանելեացն. թեր-  
ևս այրեացն պիտէր: 9. Միւս օր. փառաւորութիւն: 10.  
Միւս օր. յարէ և, զգործակիցս: 11. Միւս օրին. պարկե-  
սելոց: 12. Միւս օր. չունի. զի: 13. Միւս օրին. հոգեւո-  
րականացն: 14. Յերկոսին յօրինակն ևս աւխարհակաց  
էր: 15. Միւս օր. դպրութեամբ: 16. Միւս օրին. կա-  
ցուցին: 17. Միւս օրին. ծածկականօ: 18. Միւս օրին.  
դժուարենամատոյց: 19. Միւս օրին. հարանց ամացն:  
20. Յօրինակին և ի միւսն. իւրեանց բնականի երե-  
ծանել: 21. Յօրին. դասս դասս. 22. Յօրին. Մուսեղ էր.  
ուզգեցաք ըստ միւս օր. 23. Միւս օրին. զգուշացնալ:  
24. Միւս օրին. առներ: 25. Յօրինակին. Անտիպ. և  
միւս Անտիպ. բայց Խորենացին Անատոլ ասէ: 26. Միւս  
օրին. ծայրագոյն: 27. Յօրինակին. սակեալ էր. թերևս  
սկսեալ: 28. Միւս օրին. եղեալ: 29. Միւս օրին. Արս-  
վաղէ. 30. Միւս օրին. ձեռնետու. 31. Միւս օրին. կոր-  
զելով: 32. Միւս օրին. ի գոհութիւն: 33. Միւս օրին.  
ազատ: 34. Միւս օրին. ի քերեւագոյն: 35. Միւս օրին.  
ի զիտութեան: 36. Միւս օրին. խաղաղացնալի: 37. Միւս  
օրին. ի լուսանցս երրորդ: 38. Միւս օրին. վերնոյն: 39.  
Միւս օրին. քրիստոսադրու: 40. Յօրին. էր ըստ յառա-  
ջագոյն կատարելոյ վարդապետին. եղաւ ըստ Միւս օրին:  
41. Միւս օրին. ի կատարումս:

## ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբրահամ նահապետ 5:  
Ազքանազեան, Ասքանա-  
գեան աղդ 1, 44:  
Ակակիոս եպիսկ. 14 24:  
Ակումիտ 24:  
Ազուան, Ազուանք 27, 28,  
29, 49:  
Ազուան երէց Բենիամին  
27:  
Ազուաներէն լեռու 27:  
Ազուանից աշխարհ 28:  
Ազուանից եկեղեցի 29:  
Ազուանից կողմունք 27,  
29, 33, 54:  
Ամատոնեաց ազգ 40, 63:  
Ամիգ, Ամիթ քաղաք 14:  
Այրարատ, Այրարատեան  
գաւառ 16, 19, 30, 39,  
62:  
Անանիաս եպիսկ. Սիւնեաց  
22:  
Անատոլ, Անատոլիս զօրա-  
վար 24, 49, 50.  
Աշուշայ իշխ. Տաշբաց 30:  
Աշոյեցիք 7:

Աշտիշատ գեւլ 38, 60:  
Առակը Սողոմոնի 15, 48:  
Առաւան հազարապետ 9:  
Ասորի 49:  
Ասորի, Ասորական բար-  
բառ 30, 51:  
Ասորիք 14, 15, 47:  
Ասորոց կողմունք 30:  
Ատտիկոս հայրապետ 25,  
49:  
Արամի կողմունք 14:  
Արկադիոս կայսր 24:  
Արձիւլ թագ. Վրաց 29:  
Արշակունեաց գաւառ 9:  
Արշակունիք 44:  
Արսվադ թագ, Ազուանից  
28:  
Արտաշէս թագ. Հայոց 27:  
Աւետարան Քրիստոսի,  
Աւետարան սր. 5, 6, 19,  
21, 24, 45, 57:  
Աւական — Օշական 41,  
63:

Բաբիլաս եպիսկ. 14:  
Բարիլոն 4:  
Բարբարիանոս, Բորբորիա-  
նոսաց աղանդ 26, 50:  
Բագրաւանդ, Բագրեանդ  
գաւառ 37, 59:  
Բակուր թագ. Վրաց 22:  
Բաղասական կողմունք 29:  
Բինիամին երէց Ազուան  
27:  
Բիւզանդիոն, Բիւզանդիոն  
քաղաք 50, 52:  
Բլրոցաց գիւղ, Բլուր գիւղ  
37, 59:  
Գարդման 29:  
Գարդմանական ձոր 29:  
Գալիլեայ 4:  
Գինթ եպիսկ. Դերջանոյ  
25:  
Գիւտ որդի Շաբաթայ 21:  
Գողթն, Գողթան, Գողթան  
տեղիք, Գողթան տուն  
11, 21, 45:  
Գործք Առաքելոց 6:  
Գործք Աւետարանչաց 20,  
Գրիգոր սր. Լուսաւորիչ  
61:  
Դանան աշակերտ Մաշթո-  
յի 27:

Դանիէլ եպիսկ. Ասորի 12,  
47:  
Դանիէլ մարգարէ 4:  
Դաւիթ մարգարէ 4, 18,  
20:  
Դեղջան 25:  
Դիսմոն արքայ Պարսից  
43:  
Դուստր՝ կին Վարդանայ  
38:  
Եբրայեցիք 3:  
Եգիպտոս 4:  
Եղեսիա, Եղեսացւոց քա-  
ղաք 14, 30, 51:  
Եղնիկ Կողբացի, Եղնակ  
30, 31, 51, 52, 53:  
Եկեղեց գաւառ 15:  
Եկեղեցի Սիւնեաց 21:  
Ենովք աշակերտ Մաշթոցի  
27:  
Եպիփան 47:  
Երեմիա եպիսկ. 28, 38, 60:  
Եփեսոսական կանոնք 31:  
Եփեսոսի ժողով 52, 59:  
Թագիկ, Թողիկ, աշակերտ  
Մեսրոպայ 40, 41, 62,  
64:  
Թանան աշակերտ Մաշթո-  
յի 27:

Թէոդիոս, Թէոդորոս հեր-  
ձուածող 37, 59:

Թէոդոս կայսր 24, 48, Հայոց բանակ 39:  
49: Հայոց դպրութիւն 43:  
Թաքօրական լեառն 35: Հայոց երկիր և կողմունք  
13, 23, 33, 42, 51, 54,  
Իսահակ 30: 64:  
Իորայէլ 6: Հայ լեզու, Հայ բան 46,  
48, 51, 52:  
Խորձենական գաւառ 20: Հայերէն, Հայերէն լեզու,  
Խուրս իշխ. Գարդմանից Հայերէն բարբառ 12—  
29: 14, 30, 46, 47, 52:  
Հայերէն նշանագիրք 53:  
Կաթուղիկեայք 7: Հայք 12, 13, 19, 23, 25—  
Կայենականք 20: 27, 44, 46, 48—50, 56,  
Կաըապետ յառաջամուտ 5: 59, 62:  
Կողք գեւդ 30: Հայք Մեծք 9, 11, 27, 30,  
Կոստանդնուպոլիս, Կոս- 40, 63:  
տանդինական քաղաք 25, Հացեկաց գեւդ 9, 44:  
31, 52: Հելենական լեզու, դպրու-  
Կորիւն վարդ. աշակ. Մես- թիւն 9, 15, 31, 44, 52:  
րովպայ 1, 31, 44, 52: Հելենացիք 44, 48:  
Կտակարանք եկեղեցւոյ 31: Հելենացւոց սիղոբայք 48.  
Կրման արքայ 43: Հին Կտակարանք 48:  
Հաբէլ երէց 12, 13: Հմայեակ Մամիկոնեան 40,  
Հայաստան ազգ, 12, 20: 63:  
Հայաստան աշխարհ 1, 16, Հոռոմ, Հոռոմք 24, 37:  
19, 31, 37, 44, 52: Հոռիանոս—Ռուփինոս 15,  
Հայաստանեայք 61: 47:  
Հայոց ազգ 24, 25, 26: Զիթաստանեաց լեառն 35:  
Հայոց աշխարհ 9, 19, 24, Ղեւոնդ, Ղեւոնդէս, Ղե-  
31, 48, 49, 52, 59: ւոնդոս 24, 31, 52:

Ղուկաս Աւետարանիչ 6, 8: Յոթոր 5:  
Յոյն, Յոյնք 24, 49:  
Մամիկոնեան որեար 20: Յովհան յԵկեղեաց գաւա-  
Մամիկոնեան տոհմ 40, ռէ 15, 41, 48, 64:  
63: Յովիաթան քահանայ 29:  
Մաշտոց—Մեսրոպ 1, 13, Յովսէփ աշակերտ Մեսրոպ-  
20, 32, 37, 38, 41: պայ 1, 15, 30, 40, 41,  
Մակեդոնիա 7: 48, 51, 62, 64:  
Մարաց կողմունք 11, 17, Յովսէփ Դեղեցիկ 4:  
46: Յովսէփ Յուղեցիկ 4:  
Մարք 17: Յունական, Յունարէն  
Մելիտինացւոց քաղաք 24: բարբառ, դպրութիւն 14,  
Մեծք Հայք 27, 30: 31, 49, 52:  
Մեսրոպ, Մեսրովը—Մաշ- Յունաց կողմունք 24, 31,  
տոց 1, 44, 47—50, 52, 53, 56, 58—60:  
53, 56, 58—60: Նաթանայէլ 6:  
Մերուժան 49: Ներրոտ 4:  
Միջագետք Ասորւց 47: Նեստոր 59:  
Մուշէ Տարօնացի 20: Նիկիական կանոնք 31:  
Մուշեղ եպիսկ, 29: Նիկիոյ ժողով 52:  
Մովսէս եպիսկ, Վրաց 22: Նշանագիրք հայերէն լե-  
Մովսէս մարգարէ 5, 16— զուի 12, 14:  
19. Նոր քաղաք 16, 27, 39,  
Մովսիսական պատմու- 62:  
թիւն 2:  
Յազկերտ 37, 43, 59:  
Յակոբոս Տեառն եղբայր 8:  
Յիսուս 8, 33, 35, 36, 38,  
55, 57:  
Յոբ երանելի 5, 8:

Շաբաթ, Շամբիթ իշխան  
Գողթնեաց 21, 45:  
Պաղանական տուն 15:  
Պարսիկք, Պարսք 43, 49,  
59, 64:

- Պարսից աշխարհ 37:  
 Պաւլոս Առաքեալ 3, 6—8,  
 19, 35, 57, 58:  
 Պաւլոս Սամոստացի 59.  
 Զաղայ թարգման 23:  
 Խաճ գետ 17:  
 Խոռվինոս — Հոռվանոս  
 15, 47:  
 Սահակ սուրբ Պարթև 12,  
 13, 20, 23, 27, 30, 31, 37,  
 39, 46, 48—52, 59, 62:  
 Սամոս 47:  
 Սամուէլ եպիկուլ. 23, 30:  
 Սամուսատական կամ Սա-  
 մոստացոց քաղաք 14:  
 Սամփոսն 4:  
 Սինէտական լետոն 16:  
 Սինէտական աշխարհ 21:  
 Սիւնեաց եկեղեցի 21:  
 Սիւնիք, Սիւնեաց երկիր,  
 սահմանք 21, 22:  
 Սոդոմ 5:  
 Սողոմոնի Առակը 15.  
 Ստեփաննոս երանելի (Նա-  
 խավկայ) 37:  
 Վահան Ամասունի 40—42,  
 63, 64:  
 Վահրիմ 12:  
 Վաղինակ իշխ. Սիւնեաց  
 21:  
 Վասակ Սիստական 22:  
 Վարդան հայր Ս, Մեսրոպ-
- պայ 9, 44:  
 Վարդան—Վարդկան Մա-  
 միկնեան 20, 38, 49,  
 60:  
 Վիրք 22, 23, 29:  
 Վոամ հայր Յաղկերտի 37,  
 43, 59:  
 Վոամշապուհ թագ. Հայոց  
 12, 13, 47, 48:  
 Վրաց աշխարհ, կողմունք  
 22, 29, 33, 48, 54:  
 Վրացերէն լեզու 22, 23:  
 Տաշիրք 30:  
 Տարօն, Տարօնական գա-  
 ւառ, նահանգ 9, 20, 38,  
 44:  
 Տէր եպիսկոպոս 20:  
 Տիբերական ծով 35:  
 Տիմոթէոս 38:  
 Տիգրոն, Տիսպոն քաղաք  
 42, 64:  
 Տիրամայր սուրբ 4:  
 Տիրայր Խորձենացի 20:  
 Բահար 3:  
 Փրկիչ 5:
- Քանանացի 6:  
 Քըլստոս 6, 8, 10, 11, 14,  
 18—23, 27, 28, 33, 34,  
 36, 37, 40—46, 49, 54—  
 62, 64—66:  
 Օշական—Աւշական 41, 63:

ՀՈՒԿԱՍԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա.	Եղիշէի Պատմութիւն Վարդանանց սպառուած.	.	.	.	20 կ.
Բ.	Հազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան 30 կ.	.	.	.	
Գ.	Կիբակոսի վարդապետի Գանձակեցւոյ Պատմութիւն Հայոց . . . . .	30	կ.	.	
Դ.	Պատմութիւն Նահանգին Սիսական Ստեփաննոսի Օրբէլեան . . . . .	50	կ.	.	
Ե.	Յովհաննէս Կաթողիկոսի Դրասիսանա- կեցւոյ Պատմութիւն Հայոց . . . . .	30	կ.	.	
Զ.	Պատմութիւն Արքատակեայ վարդա- պետի Լաստիվերցւոյ . . . . .	20	կ.	.	
Է.	Պատմութիւն Սեբէստի Եպիսկոպոսի ի Հերակլն. . . . .	40	կ.	.	
Ը.	Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատ- մութիւն Աղուանից աշխարհի . . . . .	40	կ.	.	
Թ.	Յակոբ Շահամիրեանց, Որոգայթ փառաց . . . . .	50	կ.	.	
Ժ.	Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց . . . . .	40	կ.	.	
ԺԱ.	Եղիշէ. մամուլի տակ.	.	.	.	
ԺԲ.	Կանոնդիրք Հայոց, մամուլի տակ.	.	.	.	
ԺԳ.	Կորիւն, պատմ. ո. Մեսրոպայ . . .	5	կ.	.	



ՀՀ Ազգային գրադարան

NL0393371

